ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 5

№ ԲՄԱՊՁԲ-7/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17-ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յուլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.04.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 102 605 880 (մեկ հարյուր երկու միլիոն վեց հարյուր հինգ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Դավթաշեն, 2-րդ թաղ., 43շ, բն.4
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500010357170100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01401456
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտ պետ	տնօրեն
Ն. ՅՈՒԼՉՅԱՆ	Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2020թ. ըստ ամիսների				
						Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հնդկաձավարով շիլա մսով)	կգ	1 296	46 852	60 720 192	10 000	10 000	10 000	10 000	6 852
2	Բուսական պահածո ոսպով-բրնձով (Պահածո՝ բուսական, ոսպով բրնձով)	կգ	894	46 852	41 885 688	10 000	10 000	10 000	10 000	6 852
Ընդհանուր գումարը՝ 102 605 880 (մեկ հարյուր երկու միլիոն վեց հարյուր հինգ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ										

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ										
		CPV-ի կոդը	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հնդկաձավարով շիլա մսով)	15131632/8	12960000	25920000	38880000	51840000	60720192	60720192	60720192	60720192	60720192	60720192
2	Բուսական պահածո ոսպով-բրնձով (Պահածո՝ բուսական, ոսպով բրնձով)	15331610/2	8940000	17880000	26820000	35760000	41885688	41885688	41885688	41885688	41885688	41885688

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտ պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Հ.Ա.Ն.Ա.-Ֆուդ» ՍՊԸ տնօրեն

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ